

علاوه

منظومه افکار غزته منه مخصوص

ՅԱԻԵԼՈՒԱԾ “ՄԱՆՋՈՒՄԷ”, Ի

1908 Յուլիս 14, Երկուշաբթի

ՊԱՇՏՏՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՅՈՒՄ

Ամէնուն յայտնի է թէ մեր Վեհ. Կայսեր անձամբ հաստատած ու հրատարակուած Սահմանադրական Օրէնքին տրամադրութիւնները այս պահուս գործադրութեան դրուելով, Պոլսոյ մէջ և գաւառները ընտրութեան ձեռնարկուելը հրամայած է Կայս. բարեհաճ Իրատէ մը և պատկանեալ իշխանութիւնը հրահանգ տուած է ամէն կողմ: Կայս. ամէն կարգի հպատակները ամէն կողմ շնորհաւորական ցոյցեր ըրին և հայրենասիրական ու հպատակութեան այս արտայայտութիւնները Կայս. գոհունակութեան արժանացան, ինչպէս ծանուցուած էր թերութեռու միջոցաւ:

Վեհ. Կայսեր ղերջնական պահանջն է որ Սահմանադրական Օրէնքին տրամադրութիւնները բառ առ բառ գործադրուին, և ո՛չ մէկ ատեն ու ո՛չ մէկ պատճառով անոր գործադրութեան վնաս մը չգայ: Այսպէս, ամէն կողմ, անմիջապէս կատարեալ արագութեամբ և ուշադրութեամբ շարունակուելով ընտրութիւնները, շնորհիւ Աստուծոյ, նոյն օրէնքին 43րդ յօդուածին համաձայն, առաջիկայ Նոյեմբերի սկիզբները Երեսփ. Ժողովին գումարուելը որոշուած է Տէրութեան կողմէ: Կայս. Իրատէի մը համաձայն, այս իմաստով ծանուցուեցաւ ամէն կողմ:

Կայս. այս շնորհը, որուն Վեհ. Կայսեր գթութեան և նպատակին արդիւնքը ըլլալը պարզ ապացոյցով բացարձակապէս կը հաստատուի, պէտք է հաւատարիմ հպատակներուն կողմէ կատարեալ վստահութեամբ և հաւատքով դիտուի, պահանջուած հանգամանքները ունեցող անձերու ընտրութեան այժմէն ձեռնարկուի՝ և նոյն օրէնքին շարունակութեան անհաշտ և հաւատարմութեան ու հպատակութեան անվայել ամէն տեսակ պահանջներէ և ընթացքներէ հեռանալով, իրենց մասին եղած նըպաստաւոր բարձր կարծիքին համաձայն այս անհման շնորհին համար իրենց արժանի ըլլալը անգամ մըն ալ ապացուցանելը իրենց հայրենասիրական պարտքերէն է:

Հետեւաբար, Տէր մի՛ արասցէ, իրենց կողմէ Կայս. հաճութեան հակառակ ստորին ընթացք մը, ազգին, երկրին ու տէրութեան համար անգործմանելի վնասներ առաջ կը բերէ, ինչ որ անհաշտ է հայրենասիրական ոգիին: Այս պարագան պէտք չէ ուշադրութիւնէ հեռացնել: Հետեւաբար, ամէնուն կը ծանուցուի ու կը յանձնարարուի վերջ տալ երեք օրէ ի վեր տիրող ցոյցերուն:

